«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Իսկուհի Մոսինյան

Ուսումնական հաստատություն՝ Ալավերդու Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 7 միջն. դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն…….2

1. Ժամանակակից ընտանիքը՝ որպես սոցիալական միավոր և նրա դերը երեխայի անհատականության կայացման գործում……..4
2. Ուսուցիչ- ծնող համագործակցություն……..6
3. Կրթադաստիարակչական գործընթացում ծնողական օգնության արժևորում.....14
4. Եզրակացություն……15
5. Օգտագործված գրականության ցանկ……16

Ներածություն

Ժամանակակից աշխարհում դպրոցի և ընտանիքի առջև խնդիր է դրված՝ դաստիարակել ներդաշնակորեն զարգացած անհատականություն:

Դաստիարակությունն իրականացվում է տարբեր սոցիալական ինստիտուտների, այդ թվում՝ընտանիքի և կրթական հաստատությունների կողմից: Դժվար է գտնել դաստիարակության ավելի հզոր գործիք,քան մանկավարժական աշխատող-ծնող արդյունավետ, նպատակային համագործակցությունը: Ճիշտ է, ուսուցիչները երեխայի անձի ձևավորման ուղղությամբ հսկայածավալ, շնորհակալ աշխատանքներ են տանում, սակայն նրանց հնարավորություններն անսահմանափակ չեն, նրանց կողքին պիտի կանգնի ընտանիքը՝երեխայի խնամակալությունն ստանձնած բոլոր անդամներով, որպեսզի կրթադաստիարակչական գործընթացն ապահովի ցանկալի արդյունք:

‹‹Երեխային ներկայացվող պահանջների միասնությունը, նրա արարքների գնահատման մեջ միաբանությունը, ընդհանրապես արժեքակողմնորոշիչ միասնության առակայությունն ընտանիքում դաստիարակության կարևորագույն սկզբունքն է, ընտանիքի՝ որպես կոլեկտիվի, էական բնութագիրը›› (Պետրովսկի ‹‹Երեխաները և ընտանեկան դաստիարակության տակտիկան››- էջ 60)

Ինչպես ասել է ռուս մեծ մանկավարժ Սուխոմլինսկին, ‹‹ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա››:

Ընտանեկան հարաբերությունները, որոնցում ապրում է երեխան, պետք է համապատասխանեն ընտանիքի նպատակներին և որոշվեն դրանցով: Բայց ծագում է հետևյալ հարցը. դաստիարակութան այն հնարները, որ ծնողները գործադրում են, արդյոք մի՞շտ են համապատասխանում այդ ճիշտ ծրագրված նպատակներին: Երբեմն դժվար է լինում ասել, թե տվյալ կոնկրետ մանները արդյո՞ք համապատասխանում է դաստիարակության հեռավար ակնկալիքին, թե՝ոչ:

Կան ընտանիքներ, որտեղ երեխայի նկատմամբ կիրառվում են բավականին հաջող դաստիարակչական մոտեցումներ և հակառակը, կան նաև այնպիսիները, որտեղ ծնողները ընդհանրապես ժամանակ չունեն երեխաներով զբաղվելու, իսկ երեխաներն էլ կարծես թե դաստիարակվում են տարերայնորեն: Այստեղ արդեն մեծանում է կրթական հաստատության սերտ համագործակցության դերը երեխայի դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու գործընթացում:

Արդիականությունը

‹‹Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում›› թեման այնքանով է արդիական, որ ‹‹Հանրակրթության մասին օրենքում›› կան թեմային առնչվող դրույթներ, մասնավորապես՝ հոդված 28-ի կետ 2-ում: Այսինքն, շատ է կարևորվում ընտանիք-դպրոց արդյունավետ համագործակցությունը, նրանց աշխատանքների համադասվածությունն ու փոխկապակցվածությունը, երեխայի կրթական մակարդակի և ընդհանուր զարգացվածության մասին տեղեկատվության փոխանակումը, քաղաքացիական պատասխանատվության դաստիարակումը:

Թեման արդիական է նաև նրանով, որ ծնողների մեծ մասը իրազեկ չէ երկրում տեղի ունեցող կրթական բարեփոխումներին, նոր մոտեցումներին ու պահանջներին և ունի իրազեկման պահանջ:

Հետազոտության նպատակը

1.Արժևորել ընտանիք-դպրոց արդյունավետ համագործկցությունը և միասնական մոտեցումը՝ի շահ երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման:

2.Խթանել ծնողների հետաքրքրությունը ներդպրոցական ողջ գործընթացի նկատմամբ:

Հետազոտության խնդիրները

1. Բացահայտել ծնողների իրազեկվածության աստիճանը կրթական բարեփոխումների ոլորտի վերաբերյալ:
2. Առաջարկել տարաբնույթ մոտեցումներ ճիշտ համագործակցության համար:
3. Ծնողներին ներգրավել դպրոցի կրթադաստիարակչական գործընթացին:
4. Գնահատել ծնողների անգամ ամենաչնչին աջակցությունը կրթադաստիարակչական գործընթացին:

1.Ժամանակակից ընտանիքը՝ որպես սոցիալական միավոր և նրա դերը երեխայի անհատականության կայացման գործում

Ըստ Վ. Ի. Կուրբատովայի՝ «Ընտանիքը ամուսնության կամ ազգակցական հարաբերությունների վրա հիմնված փոքր խումբ է, որի անդամները կապված են ընդհանուր կյանքով, փոխօգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ»:

Այն ընտանիքն է լավագույնը, ուր ծնողներն ապրում են հաշտ, խաղաղ կյանքով, միմյանց նկատմամբ հոգատար են, օժտված են բարոյական բարձր հատկանիշներով, և որ գլխավորն է՝նրանց մեջ կա փոխադարձ սեր: Եվ իրոք, սերը ընտանեկան դաստիարակության գլխավոր չափանիշ է: Ինչպես հույներն են ասում, «ընտանիքը երեխաների համար դառնում է հայելի, որի մեջ բոլորը տեսնում են իրենց ճիշտ ձևավորվող էությունը»:

Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Ինչպես հասարակությունը կարիք է զգում հատուկ կառավարման համակարգի, այնպես էլ ընտանիքը չի կարող վայրիվերո, ինքնահոսի , առանց հատուկ ռեժիմի ու կարգապահության դաստիարակել երեխային: «Ընտանիքը աղբյուր է, որի ջրերով սնվում է մեր պետության լիահոս գետը» : (Սուխոմլինսկի)

«Ընտանիքը կարող է դաստիարակել միայն այն դեպքում, երբ ինքը դաստիարակված է: Ճիշտ դաստիարակելը ընտանիքի համար սոսկ պարտականություն չէ, այլ հասարակության կողմից ներկայացվող պահանջ, քանի որ կանոնավոր դաստիարակություն չստացած մարդը փորձանք է ոչ միայն ընտանիքի, այլև ընդհանուրի ճանապարհին» (Պ. Խաչատրյան «Ընտանիք և դաստիարակություն», էջ 4)

Եվ, բնականաբար, աճող սերունդը պետք է լինի ոչ միայն բանիմաց ու աշխատասեր, այլև բարոյական ու որակական բարձր հատկանիշներով օժտված: Այս մոտեցումը պետք է գիտակցի թե հասարակությունը, թե դպրոցը, թե ընտանիքը:

Երեխան երբեք ինքնուրույն չի զարգանում: Ինչպես Յ. Ա. Կոմենսկին է նշում իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ, «Մարդը բնությունից ստանում է միայն նախադրյալներ, որոնք հատուկ խնամքի, դաստիարակության կարիք ունեն»: Որպեսզի երեխան տիրապետի սոցիալական հմտություններին, նրան անհրաժեշտ են մեծահասակներ, ովքեր ակտիվորեն կուղղորդեն նրա սոցիալականացման գործընթացը ճիշտ ուղղությամբ: Առաջին մեծահասակները երեխայի ծնողներն են, ումից նա ընդօրինակում է և լավ, և վատ կողմերը: «Մի կարծեք,- ընդգծում էր Ա.Ս.Մակարենկոն, դիմելով ծնողներին, - որ դուք երեխային դաստիարակում եք միայն այն ժամանակ, երբ խոսում եք նրա հետ, կամ խրատում եք նրան, կամ հրամայում եք նրան: Դուք նրան դաստիարակում եք ձեր կյանքի ամեն վայրկյանին, նույնիսկ այն ժամանակ, երբ դուք տանը չեք»: Այո, երեխայի կյանքի առաջին իսկ օրերից ծնողներն են են սովորեցնում հաղորդակցություն, վարքի կանոններ, սոցիալական հմտություններ ու կարողություններ:

«Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը՝ ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ» (Նախաշավիղ 2014 համար 4):

Ընտանիքների գործառույթներն ու խնդիրները բազմաթիվ են, որոնցից ըստ « Դաստիարակության դրական մոտեցումներ» ուսումնական ձեռնարկի՝ առանձնացվում են սոցիալականացման և դաստիարակչական գործառույթները, որոնց մեջ առանձնահատուկ դեր ունեն հաղորդակցումն ու շփումը: Շփման արդյունքում է, որ ձևավորվում է ոչ միայն գիտելիքը կիրառելու կարողություն ու հմտություն, այլ նաև արժեհամակարգ: Իսկ հաղորդակցման ընթացքում երեխան ձեռք է բերում խոսքային հմտություններ, բարեկիրթ վարք, ապրումակցելու կարողություն, հարգանքի դրսևորման տարրեր ուսուցչի, ընտանիքի անդամների,

մեծահասակների նկատմամբ: Ձևավորվում է նաև նրա մշակութային կարողունակությունը: Թերևս այս շարքը կարելի է անվերջ թվարկել:

Ընտանիքում բացի կյանքի համար անհրաժեշտ նվազագույն կենսաբանական կարիքներից՝ սնվելու, խմելու, քնելու, խնամքի և այլն, երեխաներն ունեն նաև որոշ հոգեբանա-սոցիալական կարիքներ, որոնք անհրաժեշտ պայման են նրանց զարգացման համար: Դրանք են՝

ա) ապահովություն

բ) սեր, հարգանք

գ) ընկալում և կարեկցանք

դ) գնահատանք

Մեծահասակները իրենց կողմից դրսևորած դաստիարակչական մոտեցումներում մեծ տեղ պիտի հատկացնեն երեխայի՝ առողջ զարգացման անհրաժեշտ պայման հանդիսացող վերոգրյալ կարիքների բավարարմանը:

Իսկ դպրոցում ուսուցիչը միայն պահանջատեր չէ, նա էլ է լավ ծանոթ սաների ոչ միայն տարիքային, այլև հոգեբանական ու անհատական առանձնահատկություններին և պետք է լավ պատկերացնի այն ուղիները, հնարներն ու միջոցները, որոնց օգնությամբ երեխան իրեն սիրված, հարգված, ապահով ու գնահատված կզգա:

Մ.Ա. Մարկովան իր մանկավարժական աշխատության մեջ առանձնակի կարևորություն է տալիս ընտանեկան դաստիարակության երեք գործոններին՝

ա) ընտանեկան դաստիարակության մթնոլորտը

բ) ընտանեկան ներգործության տևական բնույթը

գ) երեխային ընտանեկան խնդիրներին լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունը

Այս գործոնները ընտանիքում կարևորելու և կիրառելու գործում մեծ է նաև ուսուցչի դերը, ով ուղղորդում և աջակցում է ծնողին ընտանեկան դաստիարակության բոլոր

հարցերում: Այստեղից ակնհայտ է դառնում ընտանիք- դպրոց միասնական մոտեցման անհրաժեշտությունը:

2. Ուսուցիչ- ծնող համագործակցությունը

.Ինչպե՞ս ներգրավել ծնողին ներդպրոցական աշխատանքներին:

.Ի՞նչ կերպ ազդել ընտանեկան հարաբերությունների համակարգի վրա:

Սա մանկավարժների մշտական խնդիրն է: Ուսուցիչը միշտ փնտրտուքի մեջ է. ինչպիսի՞ պայմաններ ստեղծել և ինչպես մոտիվացնել , որ ծնողները ցանկանան համագործակցել դպրոցի հետ, հաճույքով այցելեն դպրոց, որ նրանց այցերը օգտակար լինեն ինչպես երեխաների, այնպես էլ իրենց և ուսուցիչների համար: Եվ ահա ուսուցչի առջև դրվում է կարևոր ու պատասխանատու խնդիր՝ ծնողներին մասնակից դարձնել կրթադաստիարակչական ողջ գործընթացին:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին մշտապես միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով:
Համագործակցությունը, որպես համատեղ գործունեություն, կարելի է բնութագրել այսպես.

- տարածական և ժամանակային մերձեցում

-նպատակի միասնություն

- գործունեության կազմակերպում և կառավարում

- գործառույթների, գործողությունների տարանջատում

- դրական միջանձնային հարաբերությունների առկայություն

Միավորելով երկու կողմի ջանքերը՝ նշանակում է՝մեծ մասամբ լուծել աճող սերնդի դաստիարակութան խնդիրը:

Ծնողների մեծ մասը լավ գիտակցում և պաշտպանում են ուսուցիչների պահանջները, ճիշտ են դաստիարակում իրենց երեխաներին և մեծ օգնություն են ցույց տալիս դպրոցին՝մատաղ սերնդի դաստիարակության նրա բարդ ու բազմակողմանի

աշխատանքում: Սակայն կան նաև այնպիսի ծնողներ, որոնք, պարփակվելով նեղ ընտանեկան շրջանակում, հասարակական դաստիարակության պահանջներին հակադրում են երեխաների հետ փոխհարաբերությունների իրենց առանձնակի գիծը, իրենց ոճը:

«Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ դեղատոմսը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ» (Վ. Դ. Սեմյոնով)

Ծնողների հետ մանկավարժական հաղորդակցության հիմնական նպատակը վստահությունն է, որին կարելի է հասնել մի շարք մեթոդական հնարների միջոցով: Ամենից առաջ մանկավարժը պետք է ծնողին փոխանցի երեխայի դրական կերպարը:

Ուսուցիչը երեխային մշտապես դիտարկում է գործունեության տարբեր ձևերում, հասակակիցների հետ շփման, հաղորդակցման, համագործակցության , նախաձեռնություն ցուցաբերելու ընթացքում և հայտնաբերում երեխայի ուժեղ և թույլ կողմերը և այդ մասին պատշաճ կերպով իրազեկում ծնողին: Այնուհետև ընդհանուր քննարկման միջոցով երկուստեք վեր են հանում երեխայի ուժեղ և թույլ կողմերը, մշակում միասնական մոտեցում. հենվելով ուժեղ կողմերին՝ զարգացնել երեխայի թույլ կողմերը: Սա արդյունավետ միջոց է, որի նպատակը կրթադաստիարակչական աշխատանքների որակի բարելավումն է: Բացի այդ, կարևոր է, որ ծնողները տեսնեն ուսուցչի դրական վերաբերմունքը իրենց երեխայի նկատմամբ և վստահ լինեն, որ նա գործում է հենց երեխայի շահերից ելնելով:

Ընտանիքի հետ համագործակցության ընթացքում հարկավոր է հենվել մի շարք սկզբունքների վրա՝

- Ընտանիքները առանձնահատուկ են և բազմազան, յուրաքանչյուրից կարելի է սովորել

- Ծնողները մշտապես տեղեկացվում են երեխայի առաջադիմության մասին

- Ծնողները ոչ միայն դիտորդ են, այլև մասնակից իրենց երեխայի համար նախատեսված կրթական ծրագրերի ձևավորմանն ու իրականացմանը

- Ընտանիքի առանձնահատկությունները հաշվի առնելու սկզբունք

- Ծնողների հետ աշխատանքի նպատակային պլանավորման սկզբունք

- Բաց քննարկումների և տեղեկությունների տրամադրման սկզբունք

- Ծնողներին աջակցելու սկզբունք

- Ծնողների մասնակցության կարևորության գնահատման սկզբունք

- Գաղտնիության պահպանման սկզբունք

Ընտանեկան դաստիարակության վրա ազդելու համար (հաշվի առնելով երեխայի շահերը) անհրաժեշտ է ընտրել ընտանիքի հետ համագործակցության օպտիմալ ձևեր:

Ձևերի ընտրությունն իրականացվում է՝ կախված ընտանիքների կրթական ներուժից՝ հաշվի առնելով նյութական կյանքի ոլորտը, ապրելակերպը և ընտանեկան մթնոլորտը, որում երեխան մեծանում է: Իսկ դպրոցը պարտավոր է օգնել ծնողներին՝ բարելավելու ընտանեկան կյանքի որակը՝նրանց համար դառնալով հոգեբանական և մանկավարժական կրթության և խորհրդատվության կենտրոն : Որպեսզի համագործակցութան ձևերը արմատավորվեն, դրանք պետք է ներդրվեն տարրական դպրոցում:

Ծնողների հետ համագործակցության բազմաթիվ ու բազմազան ձևեր կան, որոնք մշակվել ու մեզ են ներկայացվել հայտնի մանկավարժների կողմից: Հենվելով տարիների փորձին և ստեղծված իրավիճակին՝ ուսուցիչը ինքն էլ կարող է ստեղծել համագործակցության այնպիսի ձև, որը շատ ավելի արդյունավետ ու կիրառելի լինի, քան ընդունված ավանդական ձևերը: Ծնողների հետ համագործակցության առավել տարածված ձևերից են՝

1. Ծնողական ժողովները

Ըստ Ն. Ի. Բոլդիրևի « Դասղեկ» աշխատության՝ ծնողական ժողովը ընտանիքի հետ դասղեկի կապի ամենատարածված ձևն է,հրավիրվում է ուսումնական տարվա սկզբին և ուսումնական քառորդի վերջին, որի ընթացքում քնարկվում են դպրոցում և ընտանիքում երեխաների դաստիարակման կարևոր հարցերը: Սակայն ծնողական ժողովներ կարելի է հրավիրել պարբերաբար՝ ելնելով անհրաժեշտությունից և

իրավիճակից: Օրինակ՝ դասարանում ստեղծվել է կոնֆլիկտային իրավիճակ. Երեխաները բաժանվել են խմբերի, իսկ ծնողները փորձում են խնդիրը հարթել իրենց իմացած միջոցներով, որոնց մեջ մեծ տեղ են գրավում սպառնալիքները: Այստեղ մեծանում է ուսուցչի դերը, ով կազմակերպում է ծնողական հանդիպում, որի ընթացքում քննարկվում է ստեղծված տհաճ իրավիճակը, առաջարկվում բոլորին գտնել իրավիճակի ստեղծման պատճառը, մշակել այն վերացնելու ուղիներ : Եվ հետաքրքիրն այն է, որ պատճառը բացահայտելուց հետո ինքնըստինքյան գտնվում է խնդրի լուծումը: Այսինքն, եթե ծնողը փորձում էր կոնֆլիկտը լուծել առանց պատճառն իմանալու, որը կարող էր հանգեցնել իրավիճակի էլ ավելի սրման, ապա ուսուցիչը, ընդհանուր քննարկման արդյունքում ուղղորդելով և ճկուն մոտեցում ցուցաբերելով , հայտնաբերեց պատճառը և մատնանշեց պատճառի վերացման ուղիները: Իսկ հետևանքը կոնֆլիկտի հարթումն էր:

Ծնողական ժողովների ընթացքում հետաքրքիր մոտեցումներով վեր է հանվում ծնողի դիրքորոշումը դպրոցի ընդհանուր աշխատանքների մասին: Անանուն հարցաթերթիկների միջոցով ուսուցիչը ծանոթանում է նրանց կարծիքներին դպրոցականի ուսուցման որակի մասին, կարևորում նրանց առաջարկները կրթադաստիարակչական աշխատանքների բարելավման շուրջ: Եվ երբ ծնողը տեսնում է, որ իր կարծիքը հաշվի է առնվել, առաջարկությանը ընթացք է տրվել, նա իրեն արժևորված է զգում և ավելի ու ավելի մեծ ցանկություն է դրսևորում ներդպրոցական աշխատանքներում մասնակցություն ցուցաբերելու:

Չմոռանանք նաև ծնողական ժողովների ընթացքում ուսուցչի դրսևորած դրական վարքագծի մասին: Պետք է խուսափել մանկավարժական բարդ տերմինալոգիա օգտագործելուց, հարգել յուրաքանչյուր ծնողի մասնակցության և կարծիքներ հայտնելու իրավունքը, չքննադատել և չվիրավորել նրա արժանապատվությունը: Վարվելակերպի նման դրսևորումը ավելի է խորացնում ծնող- ուսուցիչ փոխվստահության հիմքերը:

Այսպիսով, եթե ծնողական ժողովները չեն կրում ձևական բնույթ, ունեն հստակ նպատակ, նախապես մշակվել են նպատակին հասնելու միջոցներ, ուրեմն կարող են

օգնել ծնողին ՝ ունենալ կրթադաստիարակչական աշխատանքներին նպաստելու կարողություններ:

2. **Սոցիալական ցանցերում կայքի և տեղեկատվական խմբերի ստեղծումը** ծնողների և երեխաների հետ շփման շատ հարմար ձև է: Հաճախ ծնողները ժամանակ չեն ունենում դպրոց այցելելու համար: Ընտանիքի հետ կապի այս ձևը թույլ է տալիս ծնողներին տեղեկացնել իրենց երեխայի հաջողությունների և վարքի մասին , հատուկ օգնություն ցուցաբերել դաստիարակության և ուսման գործում, ինչպես նաև ծնողները ծանոթանում են հաղորդվող անհրաժեշտ տեղեկատվությանը և կարևորում իրենց մասնակցությունը:

3.**Տնային այցեր**:

Ներընտանեկան հարաբերությունների ուսումնասիրումը , իհարկե, բարդ, բայց հարկավոր գործ է: Տնային այցերը ուսուցչին հնարավորություն են տալիս պատկերացում կազմել աշակերտի բնավորության, նրա հետաքրքրությունների ու հակումների, ծնողների , մեծերի և փոքրերի հետ նրա հարաբերությունների մասին: Տնային այցերի նպատակն է՝

ա) ծանոթանալ ընտանեկան դաստիարակության փորձին

բ) տարածել հաջողված փորձը

գ) օգնել հաղթահարել երեխայի կրթադաստիարակչական գործընթացում առկա խոչընդոտները

Օրինակ՝ Երեխաներից մեկի մոտ նկատվող անտարբերությունը, անուշադրությունը, հասակակիցների հետ շփման պակասը ստիպեց այցելել ընտանիք: Ընտանիքը բազմանդամ էր, բազմազբաղ (նաև հաշմանդամ պապիկի խնամք): Ճիշտ է, ընտանիքում յուրաքանչյուրն ուներ իր պարտականությունները, երեխաները խնամված էին, սակայն անտեսված էր կրթադաստիարակչական գործընթացը, ‹‹քանի որ ծնողները ժամանակ չունեն››: Երեխան ամբողջ օրը կամ համակարգչի առջև էր նստած կամ հեռախոսն էր ձեռքին: Եվ ցավալին այն է, որ ծնողները անտեսում էին երեխայի նմանօրինակ վարքային դրսևորումը՝ չգիտակցելով բացասական

հետևանքները: Բնականաբար, արդեն դժվար էր երեխային կտրել համակարգչից և հեռախոսից, որովհետև այդ ամենը նրա մոտ վերածվել էր ամրապնդված վարքի:

Ծնողների հետ կազմակերպվեց խորհրդատվություն, որի ընթացքում բացառվեց պատժի ցանկացած դրսևորում, մասնավորապես կապի միջոցներից ընդհանրապես զրկելը, որովհետև դրա արդյունքում երեխայի մոտ կարող են առաջանալ բացասական արձագանքներ, ինչպիսիք են զայրույթը, վրեժը, ստելը, ինքնավստահության կորուստը և այլն: Փոխարենը առաջարկվեց այլընտրանքային մոտեցում, որի մեջ առանձնացվեց ողջամտությունը և առաջարկվեց ծնողին ստեղծել հստակ կանոնակարգ երեխայի օրվա կազմակերպման վերաբերյալ , մասնավորապես հստակեցվեց հեռախոսից ու համակարգչից օգտվելու ժամանակահատվածը:

Տնային այցերը համագործակցության եզակի հնարավորություն են, որից շահում են և ծնողները, և մանկավարժները, և երեխաները: Այդ այցերը նպաստում են երեխաների նկատմամբ հոգեբանական պատիժների, նրանց վախեցնելու, սպառնալու, ծաղրելու և անտեսելու գործոնների եթե ոչ իսպառ բացակայությանը, ապա փոքրիշատե նվազեցմանը:

4.Բաց դասեր:

Բաց դասերը ծնողներին հնարավորություն են տալիս տեսնել ուսուցչի աշխատանքը, գնահատել իրենց երեխաների հաջողություններն ու անհաջողությունները, նրանց պատրաստվածության մակարդակը և կրթական գործընթացում հնարավոր օգնություն ցուցաբերելու հնարավորությունը: Այսպես, մասնակցելով նմանատիպ դասերի, ծնողներից մեկը հայտնաբերեց, որ ինքը մինչ այդ թյուր կարծիք է ունեցել իր երեխայի ընդունակությունների և ակտիվության մասին: Նա շատ էր տարբերվում տանը դրսևորած իր վարքից; Այսինքն, տան չափազանց ակտիվությունը ուղիղ համեմատական էր դպրոցում բաց դասի ընթացքում նրա դրսևորած պասիվ մասնակցությանը: Ծնողի և ուսուցչի համատեղ ջանքերով քայլ առ քայլ երեխան սկսեց ներգրավվել դասապրոցես:

Մեկ այլ դեպքում էլ լինում է հակառակը, որը դարձյալ հարթվում է սրտացավ և ճիշտ մոտեցումների արդյունքում: Այսինքն, կա խնդիր, որը ունի բացահայտման կարիք,

բացահայտումից հետո շտկողական աշխատանքների հնարավորություն և վերջում՝ շոշափելի արդյունք:

5 Զրույցներ:

Զրույցները ծնող- ուսուցիչ համագործակցության մեջ անգնահատելի դեր ունեն: Դրանք կարող են լինել անհատական, խմբային և կլոր սեղան- բանավեճերի տեսքով: Այդ զրույցների ընթացքում վեր են հանվում երեխայի զարգացվածության ընդհանուր մակարդակը, նրանց առաջադիմությունը, վերաբերմունքը սովորելու նկատմամբ, հետաքրքրություններն ու հակումները, կարգապահական մակարդակն ու հասարակական դեմքը:

Խմբային զրույցների ժամանակ հաճախ քննարկվում են տարիքային ճգնաժամի՝ մանկավարժության և հոգեբանության մեջ առանձնացված փուլերը, աքսելերացիայի երևույթը, ինչը օգնում է ծնողին հասկանալ երեխայի մոտ հանկարծակի դրսևորվող վարքային փոփոխությունների պատճառը:

Իսկ անհատական զրույցները, որի հիմքը գաղտնիության և փոխվստահության սկզբունքն է, վեր է հանում աշակերտի բարոյական հատկությունները, խառնվածքը, բնավորությունը, կամքը, լավ ու վատ սովորույթները: Փորձում ենք հայտնաբերել օրինակ՝ եղունգներ կրծելու , աչքերը ճպճպացնելու և այլ վատ սովորությունների դրսևորման պատճառները և տալ հնարավորինս ռացիոնալ լուծում: Իսկ դա հնարավոր էմիայն վերոգրյալ սկզբունքների պահպանման դեպքում, որն այնքան էլ հեշտ չէ, պահանջում է համբերատարություն, հանգստություն, զսպվածություն:

6. Համագործակցության կիրառելի և նորագույն տեսակ է նաև **«Դասաղեկական ժամը վարում է ծնողը»** դասացուցակով արագրված դասղեկի ժամը, որը կարելի է ծնողին տրամադրել տարվա մեջ մեկից երկու անգամ, անհրաժեշտության դեպքում նաև ավելին: Վարելով դասղեկի ժամը՝ ծնողը ավելի մոտ է կանգնում երեխաների ճանաչողական, սոցիալական, հուզական և ֆիզիկական զարգացման գործընթացին: Երբ դասղեկի ժամը վարում են տարբեր մասնագիտությունների տեր ծնողներ տարաբնույթ թեմաների շուրջ, ինչպիսիք են՝« Ես և սպորտը»,« Ինչպես հարգել մեծերին», «Անվտանգ վարքագիծ», ‹‹Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն› և այլն, երեխաների հետ անմիջական շփման արդյունքում նպաստում է նրանց

ճանաչողական, հուզական և սոցիալական զարգացմանը: Չմոռանանք, որ հուզական զարգացումը հենց ինքն է նպաստում երեխաների սոցիալականացմանը:Այո, ինչպես ասում են, «երեխան պետք է զարմանա, որպեսզի զարգանա »: Իսկ ճանաչելով աշխարհը՝ նա սովորում է մտածել, հիշել, խնդիրներ լուծել, գնահատել, մեկնաբանել:

Ծնողների հետ համագործակցության ձևերի ընտրության շրջանակը բավականին մեծ է, բոլորը թվարկել՝ գրեթե անհնար է, որովհետև դա կրում է ստեղծագործական բնույթ և ուսուցչից է կախված այդ համագործակցության արդյունավետության աստիճանը: Իսկ ծնողներն էլ իրենց հերթին պետք է հստակ պատկերացնեն գործի լրջությունը և ընտանիքում երեխայի խնամքի հետ հավասար առաջնային համարեն նաև կրթադաստիարակչական գործընթացի հաջորդայնությունը, միասնական մոտեցումներն ու սիստեմատիկությունը:

3. Կրթադաստիարակչական գործընթացում ծնողական օգնության արժևորում:

Կրթադաստիարակչական գործընթացը չի կարող լինել ինքնահոսի, աննպատակ և տարերային: Այն համակարգված է, ամրակայված օրենքով, չափորոշչահեն է,հստակեցված մոտեցումներով, որը մշակվել է կրթական բարեփոխումների արդյունքների հիման վրա և իրականացվում է դպրոց-ընտանիք բարիդրացիական հարաբերությունների արդյունքում: Եվ քանի դեռ ծնողը լավ չի պատկերացնում կրթական ծրագրերի չափորոշչի էությունը, որի մեջ ամփոփված է կրթության բովադակությունը, այն արժեհամակարգը, որին պիտի տիրապետի դպրոցահասակը, ապա լիարժեք համագործակցություն ակնկալել հնարավոր չէ: Ուստի, դպրոցի առաջնահերթ խնդիրը պիտի լինի այս ամենի մասին հետաքրքիր մոտեցումներով ծնողներին մոտիվացնելով՝ իրազեկել այս մասին: Երբ ծնողն արդեն ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ կընկալի այս ամենը, կփորձի բոլոր ուժերն ու հնարավորությունները ներդնել կրթադաստիարակչական գործընթացի բարելավման համար՝ ի շահ իր երեխայի, ի նպաստ քաղաքացիական հասարակության:

Այնուհետև մեծանում է ուսուցչի դերը ծնողի կատարած աշխատանքը գնահատելու և արժևորելու գործում: Ամենաչնչին աջակցությունը, որը մատուցվում է ծնողների կողմից, պետք է արժանանա համապատասխան ուշադրության(բանավոր շնորհակալություն, լուսաբանում կայքում, գովասանք, խրախուսանք): Նման մոտեցումները, անշուշտ, վերացնում են դպրոցի և ընտանիքի միջև գոյություն ունեցող ճեղքվածքը, ամրապնդում մասնակցությունը կրթադաստիարակչական գործընթացին, օգնում ձեռք բերել մանկավարժական գիտելիքներ և այդ գիտելիքները ընտանիքում կիրառելու կարողություններ ու հմտություններ:

Այսպիսով, ընտանիքի և դպրոցի միջև ձևավորվող առողջ, նորմալ հարաբերությունները և այդ հարաբերությունների ձևավորման համար ի սկզբանե ստեղծված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը նպաստում են ուսուցիչ- ծնող – երեխա դրական կապերի առաջացմանը և քայլ առ քայլ կրթադաստիարակչական աշխատանքներում հաջողությունների գրանցմանը, արժևորմանը, ամրապնդմանը, քանի որ արժևորելով, գնահատելով ծնողի յուրաքանչյուր ներդրումը կրթադաստիարակչական գործընթացում, մենք նպաստում ենք նաև նրա մանկավարժական աշխարհայացքի ձևավորմանը:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումը.

__ Ուսուցիչ- ծնող համագործակցությունը միտված է ապագա քաղաքացու ձևավորմանը, ով իր մեջ կկրի համամարդկային որակներ, հստակ դիրքորոշում և այն կարողություններն ու հմտությունները, որոնք կօգնեն նրան կայանալու կյանքում:

__ Ծնողները , մտնելով համագործակցության ոլորտ, արժևորում են իրենց դերը՝ գիտակից ու արժեհամակարգով օժտված անձնավորության ձևավորման գործում:

___ Իրատեսական են դառնում նաև ուսուցիչների սպասելիքները, իրենց առջև դրված նպատակները և գործողությունների այն հերթականությունը, որն անխոչընդոտ կապահովի դրական արդյունքներ:

__ Կարևորվում է հավասարության սկզբունքը, հաշվի են առնվում երկուստեք արտահայտած կարծիքները և այն զարգացնող միջավայրի առկայությունը, որը կնպաստի առաջացած խնդիրների լուծմանը:

Եվ, որպես ամփոփիչ խոսք, ծնող- ուսուցիչ համագործակցությունը, կրելով ընկերական բնույթ, կնպաստի մտերմիկ հարաբերությունների , հանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը, և այդ հիմքի վրա կշահի երեխան, կշահի հասարակությունը, կշահի պետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. <<ՀՀ օրենքը հանրակրթության մասին>> 2009թ. հուլիսի10 Երևան ՀՕ-160-Ն

2. Պ.Գ. Խաչատրյան <<Ընտանիք և դաստիարակություն>> 1976թ.

3. Ա.Վ. Պետրովսկի <<Երեխաները և ընտանեկան դաստիարակության տակտիկան>> 1983թ.

4. Յու. Ամիրջանյան <<Երեխայի առաջին աշխարհը>> 1982թ.

5. Ն.Ի. Բոլդիրև <<Դասղեկ>> 1974թ.

6. Նախաշավիղ 2014թ. հ. 4

7. <<Դաստիարակության դրական մոտեցումներ>> ուսումնական ձեռնարկ 2017թ.